ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵԾԱՆՎԱՅԻՆ ՄԱՐԶԱՁԵՎԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ
ФЕДЕРАЦИЯ ВЕЛОСИПЕДНОГО СПОРТА АРМЕНИИ
CYCLING FEDERATION OF ARMENIA

ՀՀ, ք. Երևան, 0004, Ծովակալ Իսակով 27/8 /PA, г. Ереван, 0004, ул. Цовакала Исакова 27/8
Republic of Armenia, Yerevan, 0004, Tsovakal Isakov street 27/8
Հեռ. / Tel. 010-39-20-61, 098-220 -500 էլ. Փոստ/Эл. Почта / E-mail: info@cycling.am

Հ.12-2 06.12.2022թ.

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ
Կարեն Գիլոյանին
ՀՀ հեծանվային մարզաձևի ֆեդերացիայի
նախագահ Արման Սահակյանից

Հարգելի՛ պարոն Գիլոյան

Ի պատասխան Ձեր՝ 30.11.2022 թվականի թիվ 03/31.2/30468-2022 գրության՝ կապված Ստեփան Գրիգորյանի դիմում-բողոքի հետ տեղեկացնում ենք, որ սույն թվականի մայիս ամսին ՀՀՄՖ-ի նախկին նախագահի՝ Ա. Բերեզովսկու կողմից ներկայացվել է ՌԴ նախկին քաղաքացի և 2019 թվականից ՀՀ քաղաքացի հանդիսացող Ստեփան Գրիգորյանի թեկնածությունը՝ միջազգային մրցաշարերում Հայաստանի Հանրապետությունը ներկայացնելու համար:

Ինչպես բազմիցս ՀՀՄՖ-ում, այնպես էլ Ձեր անմիջական մասնակցությամբ տեղի են ունեցել քննարկումներ, և Ձեր միջնորդությամբ ու հանձնարարությամբ քննարկումների արդյունքում որոշվել է, որ ՀՀՄՖ-ն իր կանոնադրության համաձայն և իր գործառույթների շրջանակներում պետք է մարզիկին ապահովեր ամբողջական փաստաթղթային փաթեթով, որի արդյունքում մարզիկը կարող էր մասնակցել միջազգային մրցաշարերին, որը և ֆեդերացիան իր կողմից իրականացրել է:

Տեղեկացնում ենք, որ ընդհանուր պայմանավորվածության շրջանակներում ԿԳՄՍ-ն պետք է աջակցեր և օժանդակեր մարզիկին ելքի վիզա ստանալու համար, ինչը մեր տեղեկություններով նախարարությունն իրականացրել է: Ինչ վերաբերվում է ֆինանսավորմանը, ֆեդերացիայի քննարկումների ժամանակ բարերար Արտաշես Սարգսյանը պատրաստակամություն է հայտնել ֆինանսավորել միջազգային մրցաշարերին մասնակցության ծախսերը ամբողջությամբ /միայն մարզիկի մասով/, որի վերաբերյալ տեղեկատվություն չունենք:

Միաժամանակ ցանկանում ենք տեղեկացնել, որ մարզիկը՝ չնայած ՀՀՄՖ-ի գլխավոր մարզիչ Արմեն Գյոզալյանի բազմաթիվ հորդորներին, երբևիցե չի ներկայացել և

չի մասնակցել հավաքական թիմի մարզումներին, նույնիսկ մերժել է ուսումնամարզական հավաքին իր մասնակցությունը:

Ինչ վերաբերվում է ՀՀ կրկնակի առաջնություն անցկացնելու մարզիկի ոչ մասնագիտական պահանջին՝ հայտնում ենք, որ ըստ 2022 թվականի օրացուցային պլանի և նախարարության կողմից նախատեսված ու հաստատված առանց այն էլ նվազ բյուջեի, ինչպես ամեն տարի, այնպես էլ 2022 թվականի հունիս-հուլիս ամիսներին անց են կացվել հեծանվային սպորտի խճուղային և հրապարակային ՀՀ առաջնությունները, որին մասնակցել է նաև Ձեր իսկ կողմից մատնանշված մարզիկը:

Տեղեկացնում ենք նաև, որ դեռևս 2019 թվականից սկսած ՀՀՄՖ-ն բազմիցս Ձեր իսկ կողմից նշված մարզիկին առաջարկել է միջազգային մրցաշարերին հանդես գալու ՀՀ դրոշի ներքո, իրենց բանավոր պատասխաններով՝ ֆեդերացիայի առջև դրվել են ֆինանսական և սոցիալական պահանջներ, որոնք ֆեդերացիայի հնարավորություններից վեր են եղել: Միայն ռուս–ուկրաինական պատերազմական գործողությունների ընթացքում տվյալ մարզիկը ֆեդերացիայի նախկին նախագահ Ա. Բերեզովսկու խնդրանքով, իր իսկ նախաձեռնությամբ ցանկություն է հայտնել հանդես գալու ՀՀ դրոշի ներքո:

Ինչպես վերը նշել էի ֆեդերացիան իր գործառույթների շրջանակներում ընդառաջել և աջակցել է մարզիկին: Սակայն մարզիկը ելքի վիզա ստանալուց և մրցաշարերին մասնակցելուց հետո որևէ կապ չի հաստատել ֆեդերացիայի աշխատակազմի և գլխավոր մարզչի հետ, չի պատասխանել մեր կողմից բազմաթիվ զանգերին և նամակագրություններին, միայն փորձել է վարկաբեկել ֆեդերացիայի բարի համբավը և գլխավոր մարզչին:

Հարգելի՛ պրն Գիլոյան, ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Ձեզ՝ Ձեր իսկ կողմից ՀՀ հեծանվային մարզաձևին ուշադրության կենտրոնում պահելու համար և ուզում եմ վստահեցնել, որ ֆեդերացիան ջանք ու եռանդ չի խնայում միջազգային մրցաշարերում ՀՀ անունը բարձր պահելու համար: Միաժամանակ հայտնում եմ, որ ֆեդերացիան իր պատրաստակամությունն է հայտնում մարզիկի ի հայտ գալու դեպքում մնացած բոլոր մասնագիտական հարցերով Ձեր իսկ նշած ժամանակահատվածում հանդիպել Ձեր հետ և քննարկել բոլոր չպարզաբանված հարցերը:

Հարգանքով՝

Նախագահ՝ Ա. Սահակյան

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԵԾԱՆՎԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ «ՖԵԴԕԱՑԻԱ ՎԵԼՈՍԻՊԵԴՆՈՅ ՕՐԳԱՆԻԶԱՑԻՈՆՆՈՅ ԱՍՍՈՑԻԱՑԻԱ ԱՐՄԵՆԻԱ» ՀԿ
FEDERATION OF ARMENIA" NON-GOVERNMENTAL ORGANIZATION